ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

11 սեպտեմբերի 2024 թվական թիվ 211-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՀՐԱՄԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԼԵՆ-ԳԷՍ ԹԱՂԱՄԱՍ 1-ԻՆ ՇԵՆՔԻ ԹԻՎ 8 ՀԱՍՑԵԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԳԱԳԻԿ ԼԵՎՈՆԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԵՐԿՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության ժողովրդական դեպուտատների քսաներորդ գումարման Լենինականի քաղաքային խորհրդի նստաշրջանի 1991 թվականի մայիսի 3-ի թիվ 6, Հայաստանի Հանրապետության Ժողովրդական պատգամավորների Կումայրիի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 1991 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 10, Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության Ժողովրդական դեպուտատների Լենինականի քաղաքային սովետի գործադիր կոմիտեի 1993 թվականի օգոստոսի 8-ի թիվ 24 արձանագրությունները և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի բնակիչ Գագիկ Լևոնի և Լևոն Միհրանի Հայրապետյանների միասնական դիմումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Վարհամաբերդ բնակավայրի, Լեն-Գէս թաղամասի, 1-ին շենքի թիվ 8 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող, չորս սենյականոց բնակարանը՝ 108,35 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով, բազմաբնակարան շենքի ընդհանուր օգտագործման տարածքների և շենքով զբաղեցված հողամասի նկատմամբ բաժնային սեփականության իրավունքով նվիրատվություն կատարել այդ բնակելի տանը 2006 թվականից փաստացի բնակվող Գագիկ Լևոնի Հայրապետյանի ընտանիքի հետևյալ երկու անդամներին.

1) Հայրապետյան Գագիկ Լևոնի (ծնված 1975 թվականի հունիսի 21-ին), ինքը,

2) Հայրապետյան Լևոն Միհրանի (ծնված 1938 թվականին), հայրը,

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ նվիրառուների հետ կնքել գույքի նվիրատվության պայմանագիր, ապահովել դրա նոտարական վավերացումը և անշարժ գույքի նկատմամբ քաղաքացիների իրավունքների պետական գրանցումը՝ վերջիններիս միջոցներով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -21 Դեմ – 0 Ձեռնպահ – 1

Ա. ԱՅՎԱԶՅԱՆ

Ֆ. ԱՆՏՈՆՅԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Վ. ԱՐՇԱԿՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ա. ԴՐՄԵՅԱՆ
Շ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Ա. ԻԳԻԹՅԱՆ
Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Մ. ՄԱԹՈՍՅԱՆ
Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Գ. ՄԿՐՏՉՅԱՆ
Մ. ՄՆԱՑՅԱՆ
Ն. ՄՈՒՇԵՂՅԱՆ
Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ
Ա. ՉԱԼՈՅԱՆ
Թ. ՍԱՀԱԿՅԱՆ
Ս. ՍԻՄՈՆՅԱՆ
Թ. ՍՈՒՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

11 սեպտեմբերի 2024 թվական
գյուղ Ախուրյան